

Armenien, Beitrag zur Kenntniss der Geschichte, der Kirchlichen und äusseren Verhältnissen des Landes. Spanuth Pöhle — Stuttgart. 1896. (Հայաստան. Այդ երկրի պատմութեան, եկեղեցական և արտաքին հանգամանքներին ծանօթանալու նպատ. Հպ. Պետր. Է. Ըստագարա, 1896)։ Աւերջին ժամանակ հայոց մասին լոյս տեսած բազմաթիւ տետրակներից մէկն է այս, որ մեր ձեռքն է հասել։ Ինչպէս վերնագիրը ցոյց է տալիս՝ անծանօթ հեղինակն անում է այստեղ նախ Հայաստանի քաղաքական և ապա եկեղեցական պատմութիւնը, հետեւելով սովորական աւանդութեան, Այնուհետեւ նա տեղեկութիւններ է տալիս կաթողիկոս հայերի, հայոց եկեղեցւոյ վարչական կազմակերպութեան, գրականութեան և ուսումնական հաստատութիւնների, պանդխտութեան, ընտանեկան կեանքի, երկրի տնտեսական և քաղաքական դրութեան, արդիւնաբերութեան, պարապմունքների և վերջապէս արդի ողբալի միջակի մասին։ Բնականաբար այս գրուածքն ևս ազատ չէ սովորական սխալ կարծիքներից, բայց առ հասարակ համակրութեամբ է վերաբերուում զեպի հայերը, աշխատելով անկողմնապահ լինել ամեն կերպ։

Եկեղեցական գրականութեան համար մեծ նշանակութիւն ունեցող մի նոր գիւտ է եղել վերջին ժամանակ, Պրոֆ. Լանդակ յայտնել է Բերլինի Գիտութեանց ձեւարանում, որ իւր նախկին աշակերտ Գր. Արլ Ըմիգա Բ. դարու գնոստիքական մի գրուածք է գտել զպաի լեզուով, Այս գիւտի նշանակութիւնը նորանում է, որ գնոստիկեան աղանդները մեծ դեր են խաղացել Բ. դարում և նոցա հետ մարտնչելով է, որ մանուկ քրիստոնէութիւնը եկեղեցի է կազմակերպել՝ մինչդեռ աղանդաւորների բազմաթիւ գրուածքներից գրեթէ ոչ մէկը մեր ձեռքը չէ հասել և եկեղեցական պատմիչները ստիպուած են եկեղեցական հարերի պատմածներից կամ մէջ բերած կտորներից միայն եզրակացութիւններ անել նոցա մասին։ Աւստի առանձնապէս հետաքրքիր էր նոցա համար ունենալ մի սեփական գնոստիկեան գրուածք, որպէս զի կարելի լինէր անմիջական աղբիւրից ծանօթանալ այդ աղանդների հետ և ստուգել, թէ արտաքինները ինչ չափով ուղիղ են դատել նոցա մասին։ Այդպիսի մէկն է ահա Ըմիգայի գիւտը, Բերլինի Եզրագրութեանդարանի համար Ասհիրեում ձեռք բերուած մի պապիրուս ձեռագրի մէջ, որից միայն 6 թերթ ընկած է, նա գտել է Աւետարան ըստ Մարիամ ու Իմաստութիւն Յիսուսի Քրիստոսի և Գործք Պետրոսի վերնագրով գրուածքները, որոնցից հետաքրքիր է մանաւանդ առաջինը, որովհետեւ Բ. դարու առաքելական հայրերից Իրենէոսը գործ է դրել այն բարբելո գնոս-

տիկեանների մասին գրելիս, Այս գրուածքների հրատարակուելուն սպասոււմ են այժմ հետաքրքրութեամբ մասնագէտները։

Մի նկատուութիւն.


Ոչնչէս Արարատի ընթերցողներին յայտնի է, Յուլիս համարում պ. Եալաթեանի Մնացորդաց զբքերի նորագիւտ թարգմանութեան մասին գրած յօդուածին մենք մի ծանօթութիւն էինք աւելացրել, այն մտքով, թէ մի գուցէ Յարգելի Աստուգալուտի փոքր ինչ մութ կոտորներն իւր գիւտի մասին սխալ հասկացողին շարժուի օրինակի համար, թէ նա գիւտն արել էր ու յետոյ է իմացել, որ Հայր Եղիան եւս նկատել է, համեմատութիւններ անելիս, նոր թարգմանութեան տարբեր ընթերցումները։ Արդ, Հանդէս ամսօրեայ թերթն իւր Հոկտեմբեր համարում (Խ. 545), ըստ երեսութիւն պ. Եալաթեանին շատագովելու նպատակով, որին վիրաւորելու մենք ամենեւին միտք չենք ունեցել՝ աշխատում է մեր ծանօթութեան անտեղի լինելը ցոյց տալ, այն հիւան զիտայ, որ պ. Եալաթեան յիշատակել էր արդէն Հայր Եղիայի անունը եւ որ վերջինս չէ նկատել, թէ այս տարբերութիւնն յառաջ կուայ՝ ս. Գրոց, ասորերէնէ թարգմանուած ըլլալէն։ Եւ նա երբեք ցոյց տալ իրարմ, անկախ առաւելութիւններն, մի եզրակացութիւն, որի դէմ երբէք չենք միջնէ, բայց մենք յիշաւի այն կարծիքն ենք ունեցել, թէ վրաքմ, անկախ առաւելութիւններն են նաեւ։ Զքաղուելով երեք շարաթի շափ՝ ս. Էմիւսանի մատնադարանում — գտնել ըսախտաւոր դիպուածով մի զբաղիւր Աստուածաշնչի մէջ մնչելն այսօր ըսու անծանօթ մի սովորական հայ թարգմանութիւնի քաղաքովն տարբեր մի այլ թարգմանութիւն, եւ մտնելով ս. Էմիւսանի մատնադարանը, հարցուիտո՞ծ անել Հայր Եղիային իւր զբաղմանց մասին, ու տեղեկանալով նորանից, որ նորա ծնոցի տակ եղած մի օրինակ աստուածաշնչուկի Ա. Ե. Ա. Մնացորդաց զբքերը խիստ զգալի տարբերութիւններն են ներկայացնում սովորական օրինակից՝ անելն համեմատելու ու տեսնել, որ արդարեւ տարբեր են, եւ եւս թաղիւր Է. Ու. որ այդ տարբերութիւնն ասորերէնից թարգմանուած լինելուց է յառաջ գալիս՝ գիտնական սշխարհի ուշադրութեան արժանի մի գիւտ համարել այն։ Մ. Էմիւսանի մատնադարանում մէջ կատնուէին անշուշտ գոնէ 4-5 անձինք, որոնք ըսողաւոր դիպուածով Հայր Եղիայից նորա նկատած տարբերութիւնների մասին տեղեկանալուց յետոյ՝ այդ օրինակի արժէքը հասկանային, կատնուէր գոնէ մէկը, որ ասորերէնից ու աստուածաշնչուցից աւելի՝ տեղեկութիւն ունենալով ըստ պ. Եալաթեանի՝ աւելի իրաւունք ունենար ներթադրութիւններ անելու, եւ աւելի զիրուէին՝ արդէն հրատարակած լինելու նորագիւտ թարգմանութիւնը։ Բայց ս. Էմիւսանի մատնադարանի ձեռագիրներով պարապում է ահա քանի տարի է միաբաններից Գ. Տէր Մկրտչեանը, պարապել է Ար. Մնացորդ վարդապետը, պարապել են ուրիշ շատերը շարաթներով՝ ամիսներով եւ տարիներով, եւ այդ գիւտը չեն արել, որովհետեւ ոչ որի մտքից չէր անցնի յատկապէս Մնացորդաց զբքերով զբաղուելու եւ նորութիւն որոնելու, չէր անցնի նաեւ Պրոֆ. պ. Եալաթեանի

Պ. Եալաթեան կարծեմ ասորերէն չգիտէ մնչելն իսկ, եւ ուրեմն մնայն ենթադրութիւն անել կարող էր, որ պապ պէտք է ստուգել ուրիշների օգնութեամբ։

մտքից, եթէ քաղցաւոր դիպուածով շրջելն եւ նորա առաջ շղճէն: Մենք ի բոլոր սրտէ քանկանում ենք, որ Նա վայելէ իւր քաղցի արգասիքը: քայք Կիճնայի թերթի այն հետեւութիւնը, թէ Նա այդպիսով Նիւտոն է հանդիսացել եւ «տիեզերաց շարժման վարդապետութիւն» հանդէս բերել, մինչ ս- Էլմիածնի միաբանները մինչեւ այժմ տեսնում էին «ինձորի ծառէն իմաւ» եւ ոչինչ չէին հասկանում՝ առնուազն շափագանցութիւն է:

Աւելի զարմանալի այն է, որ Նոյն թերթը, Նոյն տեղը, բոլորովին հակառակ եզրակացութեան է եկել Արարատի իշխալ յօդուածին կից մեր հրատարակած Խորհրդացու պատմութեան հատուածի նկատմամբ: Այդ հատուածի վերայ ուշադրութիւն ենք դարձրել մինչ ինքնեքս, առանձին ինամքով եւ քաւականաչափ աշխատութեանք սրտատապել ենք մենք՝ ինչպէս եւ նորա մասին գրած նկատողութեան ստորեւ Կ. Վ. տառերը ցոյց են տալիս, քայք Հանդէս տմասօրեայի համար այն անխոնջ գրագէտ Գալուստ Տէր Մկրտչեանի մէկ նոր գիւտն է: Երեւի այդ ենթադրութեան առիթ եղել է մեր յիշատակութիւնը, թէ Խորհրդացու հատուածին յարակից Նիւթերը Գ. Տէր Մկրտչեանը պատրաստել է տպագրութեան համար, քայք մի՞թէ մէկից միւրը հետեւում է:

Դ. Վ.



ՄԱՆԿԱՎԱՐԹԱԿԱՆ—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.

ԻՍՂԱԿՆԵՐԻ ԽՆԱՄՔ ԳՊՐՈՅՆԵՐՈՒՄ.

Գերմանական բազմաթիւ դպրոցական համայնքներից մէկի մէջ (որ բաղկացած է մի քաղաքից, մի գիւղից եւ մի իշխանական կալուածքից) տարիներից ի վեր հաստատուել է մի մանկավարժական ընկերութիւն, հետեւել նպատակներով.

1. Տարածել դաստիարակութեան վերաբերեալ լուսաւոր գաղափարներ խօսքով, գրքով, օրինակով (կազմելով երեկոներ ծնօղների մասնակցութեամբ, տարածելով մանկավարժական գրուածքներ, օգտուելով օրական մամուլից եւ այլն).
2. Հոգալ որ դպրոցական դասերից ազատ միջոցներում աշակերտները ունենան յարմար գրագմունքներ եւ հսկողութիւն (մանկական խաղեր, ծաղիկների ինամք եւ այլն).
3. Հոգալ որ նոյնօրինակ գրագմունքներ եւ հսկողութիւն ունենան նաև դպրոցից ելած

պատանիները (համեա գուարձութեան երեկոներ եւ այլն).

4. Օժանդակել եւ պահպանել դպրոցներին նպաստաւոր հաստատութիւնները (ինսպոզութեան գանձարանների, դպրոցական գրադարանների, դպրոցական պարտեզներ եւ այլն):

Ընկերութիւնն իւր գոյութեան կարճ ժամանակում շատ բարիք է գործել եւ շատ ուրախութիւն է սփռել: Ծնօղական երեկոները միշտ բազմամարդ են լինում: Խնայողութեան գանձարանը արդէն 178 խնայող անդամներ ունի, որոնք ի միասին տարեկան մօտ 2500 մարկ են յետ ձգում: Մայիս, յունիս, յուլիս եւ օգոստոս ամիսներում կազմուող մանկական խաղերում վերջին տարին մասնակցեցին 1528 անդամներ: Բայց ամենամեծ ուրախութիւն է պատճառում՝ մեծին եւ փոքրին՝ ծաղիկների խնամքը: Ամենայն տարի մայիսի 1-ին բարձր եւ միջին դասարանի աշակերտուհիներին ընկերութիւնը բաշխում է ծաղկի տունիկեր այն վախճանով, որ տնարարութեան սովորութիւնը կենդանացնէ, մանաւանդ փոքրիկ խնամարկուհիներին ընտելացնէ, սիրել բուսական կեանքը, տոկուն լինել, փոյթ ունենալ, հաւատարմութեամբ պարտականութիւն կատարել:

Բոյսերի ընտրութեան ժամանակ աւելի ուշք են դարձնում որ բաշխուած տեսակները լաւ խնամքի տակ զգալի կերպով արգիւնաւոր լինին: Զոր օր, այս տարի ստացան Միջին դասարանները՝ երկու տեսակ արագըլակտուց (*pelarganium zonale* եւ *peltatum*), ազուեսուկ (*fuchsia hybrina*), պետունիա (*petunia hybrida*).

Բարձր դասարաններ՝ *pegonia metalica*, *coleus*, արեապէմ (*heliotropium peruvianum*) եւ սենեկի լորի:

Ծաղիկները բաշխուեցան քաղաքային ուսումնարանի մարզարանում մի թերթի հետ ի միասին: հետեւել տեղեկութիւնները մէջը նշանակելու համար.

1. Աշակերտուհու համարը, դասարանը եւ անունը.
2. Ծաղկի անունը.
5. Տարւ օրը.